

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ

ԼՃԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ 1 Ն

10.01.2018 թ.

Լճափ համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին

Համաձայն «Տալական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի, համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Լճափ համայնքի 2018թ. բյուջեն՝
ա՛) եկամուտների գծով **28174.0** հազ.դրամ
բ՛) ծախսերի գծով **29969.6** հազ.դրամ
գ՛) հավելուրդ կամ դիֆիցիտը /պակասուրդը/ **1795.6** հազ.դրամ
 2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի
 3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման համաձայն հատված 2-ի
 4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման համաձայն հատված 3-ի
 5. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդ կամ դիֆիցիտը /պակասուրդը/ համաձայն հատված 4-ի՝ 2018թ. պակասուրդը կազմում է **1795.6** հազ. դրամ
 6. Հաստատել համայնքի բյուջեի դիֆիցիտի /պակասուրդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի
- 2018թ. բյուջեի պակասուրդը ֆինանսավորվելու է վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից՝ **1795.6** հազ. դրամ:
Ոնդամներ՝ **1795.6** հազ. դրամ:
- Քանի որ նախորդ տարում վարչական բյուջեի մասով պարտքային պարտավորություն չկա, ուստի վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը **1795.6** հազ. դրամը ուղղել ո ֆոնդային մասի ծախսերի ֆինանսավորմանը:
- ԸՄՈՒ բաժնի 1 խմբի 1 դասի 5113 հոդվածի— Ծեփքերի և շինությունների կապիտալ վերանորոգում— **980.0** հազ. դրամ
ԸՄՈՒ բաժնի 1 խմբի 1 դասի 5134 հոդվածի—նախագծահետազոտական ծախսեր— **170.0** հազ.դրամ
ԸՄՈՒ բաժնի 1 խմբի 1 դասի 5122 հոդվածի— վարչական սարքավորումներ—**645.6** հազ. դրամ
- Վարչական բյուջեի պահուստային ֆոնդը սահմանել **1500.0** հազ. դրամ:
- Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի.

7. Աահմանել որ՝

ա/ Ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ձախսերի հաճախանությունները.

բ/ Ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգմանը նախատեսված հոդվածների միջև «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համապատասխան կատարվող վերաբաշխումների չափաբանակը համայնքի ղեկավարի կողմից 2018թ. բյուջեի կատարման ընթացքում սահմանել 16%-ի բաժնով:

Լճաի համայնքի ղեկավար՝



Հ.Մխմեղյան

Աշխատակազմի բարտուղար՝
Փսկականի հետ ձիշտ Լ/

Ա.Եփրեմյան